ՀՏԴ : 93(=919.81)(479.22)+947.925

Doi:10.54503/0135-0536-2023.2-114

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ 1959–2014 ԹԹ. (Ըստ պաշտոնական մարդահամարների տվյալների)*

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Վրաստան, Աբխազիա, Հարավային Օսիա, հայություն, մարդահամար, պաշտոնական վիճակագրություն, դինամիկա, ուծացում:

Նախաբան

Վրաստանը ոչ միայն Հայաստանի Հանրապետության հարևանն է, այլև՝ ռազմավարական ու տարանցիկ կարևոր նշանակություն ունեցող երկիր: Բնականաբար, այդտեղ ապրող հայությունը չի կարող դիտվել սոսկ, դասական իմաստով, համայնք. այն, իբրև մտավոր, հոգևոր-մշակութային, ֆինանսատնտեսական պատկառելի ներուժ ունեցող և Վրաստանի պատմության մեջ ամենամեծ դերակատարություն ունեցած էթնիկ միավոր, էական ազդեցություն կարող է ունենալ ՀՀ–Վրաստան զարգացող հարաբերություններում: Ելնելով այդ հանգամանքից՝ հույժ կարևոր է և՛ պաշտոնական վիճակագրության միջոցով ի ցույց դնել Վրաստանի հայության թվապատկերը, և՛ փաստերի ու իրողությունների հենքի վրա ներկայացնել դինամիկան՝ հընթացս վերլուծելով հայության թվի փոփոխությունների խորքային պատճառներն ու դրանց վրա ազդող գործոնները:

ԽՍՀՄ և Վրաստանի պաշտոնական մարդահամարների տվյալների հենքի վրա ներկայացնենք Վրաստանի հայության (առանց Ջավախքի) ժողովրդագրական պատկերի փոփոխությունը՝ 1959–2014 թթ. ժամանակափուլում:

1959–2014 թթ. հայությունը և պաշտոնական մարդահամարները Վրաստանում

Երկրորդ աշխարհամարտից հետո Վրաստանի տարածքում ապրող հայության թիվն աճի փոխարեն, ընդհակառակը, ունեցավ նվազման միտումներ: Այսպես, 1959 թ. Վրաստանում հայության թիվը կազմում էր 442,9 հազար[1], 1970 թ.՝ 452,3 հազար[2], 1979 թ.՝ 448,0 հազար[3], իսկ 1989 թ.՝ 437,2 հազար մարդ[4]: Հետաքրքրական է, որ այս նույն տարիներին աղրբեջանցի-

---

* *Ներկայացվել է 05. III. 2023 թ., գրախոսվել է 16. IV. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

[1] *Ալեքսանյան. 2013, 46:*

[2] *Տե՛ս* Итоги Всесоюзной переписи населения 1970 года. 1973, 324.

[3] Новикова, Дашко. 2002, 237; *հմմտ. Ավագյան. 1994, 109:*

[4] Национальный состав населения РСФСР: по данным Всесоюзной переписи населения 1989 г. 1990, 5.

ների թիվը, համապատասխանաբար, կազմում էր 153,6 հազար, 217,8 հազար, 225,7 հազար, 307,6 հազար մարդ, այսինքն՝ աճել է ավելի քան երկու անգամ: Ադրբեջանցիների թվի ավելացման փաստն այստեղ մեծապես կապված է վրացական միջավայրում կրոնական անհամատեղելիության, հետևաբար՝ նաև ձուլման վտանգից բացարձակապես հեռու լինելու հանգամանքի հետ:

1959 թ. Վրաստանում անցկացված մարդահամարի արդյունքներով՝ 442.916 հայերից միայն 364.381-ն են իրենց մայրենի լեզուն համարում հայերենը, մնացած 78.535 հայերից 44.184-ն իրենց մայրենի լեզուն համարել են վրացերենը, 33.342-ը՝ ռուսերենը, 1.009 հայեր էլ՝ այլ լեզուներ[5]:

Ինչպես տեսնում ենք, տասնյակ հազարավոր հայեր արդեն իսկ XX դարակեսին կորցրել էին իրենց ազգային ինքնագիտակցությունը և կանգնել ձուլման եզրին: Դրան, իհարկե, մեծապես նպաստում էր նաև Վրաստանի «ստեղծած» համապատասխան միջավայրը, որը կարող ենք անվանել վրացականացում կամ քարթվելիզացում: Գործընթաց, որին մասնակցել են ինչպես իբերա-կովկասյան էթնոլեզվաընտանիքի ճյուղերին պատկանող (քարթվելական ճյուղ՝ աջարներ, մեգրելներ, սվաններ, լազեր, աբխազաադղական ճյուղ՝ աբխազներ), այնպես էլ՝ հնդեվրոպական (հայեր, սլավոնական ժողովուրդներ, հույներ, քրդեր, եզդիներ) և սեմական (հրեաներ, ասորիներ) ժողովուրդները: Պատահական չէ, որ, օրինակ, 1959 թ. ԽՍՀՄ պաշտոնական մարդահամարի տվյալներով Վրաստանում [այդ թվում՝ Հարավօսական Ինքնավար Մարզում (ԻՄ)] ապրող 141 հազար օսերից 16.933-ը որպես մայրենի լեզու նշել է վրացերենը, 62.878 աբխազներից՝ 1.187-ը, 72.938 հույներից՝ 1937-ը, 51.582 հրեաներից՝ 35.322-ը (վրացական հրեաներ) և այլն[6]: Այս ճանապարհով XIX դարավերջին և XX դարի առաջին տասնամյակներին հազարավոր հայեր ձուլվեցին Կախեթում, Գորիի գավառում և Վրաստանի բազմաթիվ այլ մարզերում[7]: Ուսումնասիրողները ցույց են տվել, որ բազմաթիվ ենթաէթնոսներ պարունակող վրաց ժողովուրդը միշտ ավելացել է ոչ թե ի հաշիվ բնական աճի, այլև այլ ժողովուրդներին ձուլելու ճանապարհով:

ԽՍՀՄ փլուզումը, անկախացող Վրաստանում բռնկված պատերազմներն ու երկրում նոր թափ ստացած այլամերժման, ազգայնամոլական ու ձուլման քաղաքականությունն իր ծանր հետքը թողեց Վրաստանում ապրող հայության թվաքանակի, ազգային գիտակցության և դիմադրողականության վրա: Այսպես, համեմատելով 1989 և 2002 թվականների Վրաստանի պաշտոնական մարդահամարի տվյալները՝ փաստենք, որ 13 տարվա ընթացքում կտրուկ նվազել է երկրում ապրող ազգային փոքրամասնությունների թվաքանակը՝

[5] *«Ազատամարտ» (Երևան), 1994, թիվ 47, հմմտ.՝* Джаошвили. 1968, 55.

[6] *«Ազատամարտ», 1994, թիվ 49, 50:*

[7] *Այս մարզերի էթնիկ հայության պատմական անցյալի և նրանց հետ տեղի ունեցած սպիտակ եղեռնի մասին հանգամանորեն տե՛ս* Կարապետյան. *2004,* Սարգսյան. *2013:*

29,9 %-ից հասնելով 16,2 %-ի[8]*: Կտրուկ իջել էր հայերի թիվը, և, չնայած այդ հանգամանքին, հայերը Վրաստանում թվաքանակով երրորդ տեղում էին (վրացիներից ու աղրբեջանցիներից հետո)*[9]*: Այստեղ պետք է հաշվի առնել այն, որ 2002 թ. մարդահամար չի անցկացվել ինչպես Աբխազիայում*[10]*, այնպես էլ Հարավային Օսիայում: Աբխազիայում, ինչպես հայտնի է, ապրում են մեծ թվով հայեր: Այսպես, որոշ ուսումնասիրողների տվյալներով՝ 1995 թ. (վրաց-աբխազական արյունալի պատերազմի ավարտից հետո) Աբխազիայում բնակվում էր 91,16 հազար աբխազ, 89,9 հազար վրացի (մեգրելներ), 61,96 հազար հայ, 51,56 հազար ռուս, 3,5 հազար հույն*[11]*: Հայերի փոքր թվաքանակ ապրում է նաև Հարավային Օսիայում, որտեղ ևս գրեթե չի անցկացվել 2002 թ. մարդահամարը*[12]*:*

---

[8] Սաքարթվելոյի մոսախլեոբության 2002 წլոյի პիրվելի երովնული սայովելթաո աღწերիս შեդեგեբი, ტომი I, თბილისი, 2003 წ., III. մոսախլեոբության განაწილება სქესის, ასაკის, երովնեբիս, ქალაქეობის, სარწმუნოების, ქორწინებისა და განათლების მიხედვით, ცხრილი N 20, Սաքարթվելոյի մუდმივი մոսախլեոբა ცალკეული երովნებების მიხედვით.

[9] თბილისი, 2003 წ., III. մոսախլեոբության განაწილება სქესის, ასაკის, երովնեբիս, ქალაქეობის, სარწმუნოების, ქორწინებისა და განათლების მიხედვით, ცხრილი N 22, մуդմივი մոսախլեոբության განაწილება ცალკეული երովნებების მიხედვით ადმინისტრაციულ – ტერიტორიული ერთეულების (մხարեեբիս), ქალაქებისა და რაიონების ჭრილში.

[10] *Աբխազիայի տարածքում 2002 թ. մարդահամար է անցկացվել միայն Կոդորի կիրճում, որի վրա մինչ 2008 թ. տարածվում էին Թբիլիսիի իրավասությունները: Ըստ այդ տվյալների՝ կիրճում բնակվում էր 1956 մարդ, որից վրացիներ՝ 1912, աբխազներ՝ 9, օսեր՝ 2, հայեր՝ 1, ռուսներ՝ 23, աղրբեջանցիներ՝ 6, ուկրաինացիներ՝ 2,* Սաքարթվելոյի մոսախլեոբության 2002 წլոյի պիրվելի երովնული սայովելթաո աღწերիս შեդեგեբი, ტომი I.

[11] *Տե՛ս* С к а к о в. 2002, 132.

[12] *1989 թ. ԽՍՀՄ մարդահամարի տվյալներով՝ Հարավօսական ԻՄ-ի 98.527 բնակչից հայերի թիվը կազմել է 984 (1,0 %): 2002 թ. Վրաստանի պաշտոնական մարդահամարը Հարավային Օսիայի նախկին ԻՄ-ի տարածքում անցկացվել է միայն Ախալգորի (նախկին՝ Լենինգորի) շրջանի արևելյան՝ Վրաստանի կողմից վերահսկվող հատվածում, ըստ որի՝ 7703 բնակչից 6520-ը վրացիներ են, 1110-ը՝ օսեր, 37-ը՝ հայեր, 20-ը՝ ռուսներ, մնացածը՝ այլազգեր (տե՛ս* Սաքարթվելոյի մոսախլեոբության 2002 წլոյի պիրվելի երովնული սայովելթաո աღწերիս შեդեგեբი, ტომი I, ცხრილი № 22)*: 1989 թ. ի վեր՝ մինչ 2015 թ., Հարավային Օսիայում պաշտոնական մարդահամար չէր անցկացվել: 2008 թ. վրաց-օսական պատերազմի արդյունքում նախկին ինքնավար մարզի ամբողջ տարածքի վրա վերահսկողություն ունենալուց, անկախության հռչակումից և մասամբ ճանաչվելուց հետո Հարավային Օսիայում պաշտոնական մարդահամար անցկացվեց 2015 թ., որի տվյալներով՝ այդտեղ բնակվում էր 378 հայ (տե՛ս* Республика Южная Осетия, Управление государственной статистики, Итоги всеобщей переписи населения республики Южная Осетия 2015 года, официальное издание, раздел 4. На-

Վրաստանի բնակչության ազգային կազմը և թվաքանակը 1989 և 2002 թթ. մարդահամարների տվյալներով[13]

	1989 թ.	2002 թ.	Բնակչության աճի տեմպերը	1989 թ. ընդհանուր բնակչության հարաբերակցությունը (%)	2002 թ. ընդհանուր բնակչության հարաբերակցությունը (%)
Բնակչության ընդհանուր թիվը	5.400.841	4.371.535	–1.029.306 (80,9%)	100	100
Վրացիներ	3.787.393	3.661.173	–126.220 (96,7%)	70,1	83,8
Հայեր	437.211	248.929	–188.282 (56,9%)	8,1	5,7
Ադրբեջանցիներ	307.556	284.761	–22.795 (92,6%)	5,7	6,5
Ռուսներ	341.172	67.671	–273.501 (19,8%)	6,3	1,5
Օսեր	164.055	38.028	–126.027 (23,2%)	3,0	0,9
Հույներ	100.324	15.166	–85.158 (15,1%)	1,9	0,3
Աբխազներ	95.853	3.527	–92.326 (3,7%)	1,8	0,1
Ուկրաինացիներ	52.443	7.039	–45.404 (13,4%)	1,0	0,2
Այլ ազգություններ	114.834	45.241	–69.593 (39,4%)	2,1	1,3

Ինչպես երևում է աղյուսակից, 13 տարվա ընթացքում Վրաստանի հայության թիվը նվազել է 188.282-ով: Եթե նույնիսկ հաշվի առնենք, որ ավելի քան 60–70 հազար հայեր 2002 թ. չեն հաշվառվել Վրաստանի վերահսկողության տակ չգտնվող Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի տարածքում, ապա հայության թվի 120–130 հազարով նվազումը ևս խոսում է ժողովրդագրական լրջագույն փոփոխությունների, Վրաստանի հայության շրջանում առկա «ժողովրդագրական ճմռան» և դրանից բխող մարտահրավերների մասին:

циональный состав населения, родной язык и гражданство, 4.1. Национальный состав населения. 2016, 98)*:*

[13] საქართველოს მოსახლეობის 2002 წლის პირველი ეროვნული საყოველთაო აღწერის შედეგები, ტომი I, ცხრილი N 20, საქართველოს მუდმივი მოსახლეობა ცალკეული ეროვნებების მიხედვით.

2002 թ. մարդահամարի տվյալներով՝ Վրաստանում ապրող 248.929 հայերից մայրենի լեզուն հայերենն են համարել 235.531-ը, 5.692 հայեր որպես մայրենի նշել են վրացերենը, 37-ը՝ աբխազերենը, 12-ը՝ ադրբեջաներենը, 3-ը՝ օսերենը, 7525-ը՝ ռուսերենը, 129-ը՝ այլ լեզուներ[14]*:*

2014 թ. նոյեմբերի 5–19-ը Վրաստանում անցկացված պաշտոնական մարդահամարի արդյունքների համաձայն՝ երկրի ընդհանուր բնակչության թիվը կազմել է 3.713.804 [նախորդ՝ 2002 թ. մարդահամարի համեմատ (4.371.535 մարդ) նվազել է 657.731-ով կամ 15,1 %-ով]: Պաշտոնական տվյալներով՝ հայ ազգաբնակչությունը կազմում է երկրի բնակչության 4,53 %-ը[15] *կամ 168.100 մարդ*[16]*, կրկին զբաղեցնելով երրորդ տեղը (վերտին զիջելով վրացիներին ու ադրբեջանցիներին): 3.713.804 բնակչից 3.224.600-ը վրացիներ են (86,8 %), 233.000-ը՝ ադրբեջանցիներ (6,3 %), 168.100-ը՝ հայեր (4,5 %), 26.500-ը՝ ռուսներ (0,7 %), 14.400-ը՝ օսեր (0,4 %), 12.200-ը՝ եզդիներ (0,3 %), 6.000-ը՝ ուկրաինացիներ (0,2 %), 5.700-ը՝ քիստեր (չեչեններ) (0,2 %), 5.500-ը՝ հույներ (0,1 %), 2.400-ը՝ ասորիներ (0,1%), 14.300-ը՝ այլ ազգություններ (0,4%), 500 մարդ հրաժարվել է նշել իր ազգությունը*[17]*:*

2014 թ. պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ Վրաստանում ապրող 168.100 հայերից 109.000-ը կամ Վրաստանի ընդհանուր ազգաբնակչության 2,9 %-ը Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ է[18]*, որից*

---

[14] Սաքարթվելոյի մոսախլեոբության 2002 წլոյի პირველი ეროვნული საყოველთაო აღწერის შედეგები, ტომი I, ცხრილი N 24, Սաքարթվելոյի մոսախլեոբության განაწილება ეროვნების, მშობლიური და სხვა ენების მიხედვით.

[15] Սաքարթվելոյի სტატისტიკის ეროვნული სამსახური, Սաքարթվելոյի 2014 წლის մոսախլեոբության საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, თბილისი, 2018, გვ. 7, 9, դիագրամա 5: մոսախլեոբության განაწილება (%) ეროვნების მიხედვით, hմմտ.՝ 2014 წლის մոսախլեոբության საყოველთაო აღწერა Սաքարթվելոյում, გვ. 2 (https://georgia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/full%20calendar_geo_0.pdf).

[16] Ազգությունների և քաղաքացիական հասարակության հարցերով նախարարության, դեմոգրաֆիական վիճակագրություն, մոսախլեոբության 2014 թվականի մարդահամարի տվյալներ, Սաքարթվելոյի մոսախլեոբության ազգային պատկանելության գրաֆիկ 10 ամենաբազմաազգանի ազգությունների մասին (https://smr.gov.ge/uploads/prev/__72a21b22.pdf).

[17] Վիճակագրության ազգային ծառայություն (Սաքստատ), մոսախլեոբության 2014 թվականի մարդահամարի հիմնական արդյունքներ, ընդհանուր տեղեկություններ, Սաքարթվելոյի մոսախլեոբության ազգային պատկանելության գրաֆիկ 10 ամենաբազմաազգանի ազգությունների մասին (http://census.ge/files/results/Census%20Release_GEO.pdf).

[18] Ազգությունների և քաղաքացիական հասարակության հարցերով նախարարության, դեմոգրաֆիական վիճակագրություն, մոսախլեոբության 2014 թվականի մարդահամարի տվյալներ, Սաքարթվելոյի մոսախլեոբության ազգային պատկանելության գրաֆիկ մասնակցության մասին (https://smr.gov.ge/uploads/prev/__98482047.pdf). *3.097.600 մարդ Ուղղափառ եկեղեցու հետևորդ է (83,4 %), 398.700-ը՝ մուսուլմաններ են (10,7 %), 19.200-ը՝ կաթոլիկներ (0,5 %), 12.400-ը՝*

29.368-ը բնակվում է մայրաքաղաք Թբիլիսիում, 1.082-ը՝ Աջարիայի ԻՀ-ում, 144-ը՝ Գուրիայում, 67-ը՝ Իմերեթում, 182-ը՝ Կախեթում, 35-ը՝ Մցխեթա-Մթիանեթում, 2-ը՝ Ռաճա-Լեչխումի և Քվեմո Սվանեթում, 23-ը՝ Սամեգրելո-Զեմո Սվանեթում, 64.115-ը՝ Սամցխե-Ջավախքում, 13.926-ը՝ Քվեմո Քարթլիում, 97-ը՝ Շիդա Քարթլիում[19]:

Վրաստանում ապրող 168.100 հայերից հայոց լեզուն մայրենի լեզու է նշել 144.812-ը: Այսինքն՝ 23.288 հայ արդեն իսկ չի խոսում ազգային լեզվով և բռնել է ուծացման ուղին: 144.812 հայերից 57.316-ը մայրենի լեզվի հետ տիրապետում է նաև վրացերենին, 74.258-ն ազատորեն չի տիրապետում վրացերենին, 13.238-ը չի նշել՝ տիրապետո՞ւմ է վրացերենին, թե՞ ոչ: Մայրենին հայերենը համարող 144.812 հայերից 37.500-ը բնակվում է մայրաքաղաք Թբիլիսիում, 3.237-ը՝ Աջարիայի ԻՀ-ում, 998-ը՝ Գուրիայում, 528-ը՝ Իմերեթում, 1.483-ը՝ Կախեթում, 150-ը՝ Մցխեթա-Մթիանեթում, 2-ը՝ Ռաճա-Լեչխումի և Քվեմո Սվանեթում, 117-ը՝ Սամեգրելո-Զեմո Սվանեթում, 79.878-ը՝ Սամցխե-Ջավախքում, 20.095-ը՝ Քվեմո Քարթլիում, 824-ը՝ Շիդա Քարթլիում[20]:

Ինչպես երևում է ստորև բերվող աղյուսակից, 2002 թ. հետ համեմատած՝ 12 տարվա ընթացքում Վրաստանի հայության թիվը, համաձայն պաշտոնական տվյալների, կրճատվել է 80.829-ով՝ 248.929-ից դառնալով 168.100[21]:

Եհովայի վկաներ (0,3 %), 8.600-ը՝ եզդիական կրոնի հետևորդ (0,2 %), 2.500-ը՝ բողոքականներ (0,1 %), 1.400-ը՝ հուդայականներ (0,0 %) և այլն:

[19] Ծերոգցեցիսա և սամոքալաքո տանասწորոբձի սաքոտեցեցեցի սաքարթվելոս սახելմწիֆո մինիստրիս აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, մոսախլեոբձի 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, մոսախլեոբձի գանաწիլեցա რეგიონებისა და აღმარეგლობის მიხედვით (დეტალური მონაცემები) (https://smr.gov.ge/uploads/prev/_22___9e6277bd.xls).

[20] Ծերոգցեցիսա և սամոքալաքո տանասწորոբձի սաքոտեցեցեցի սաքարթվելոս սახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, մոսախլեոբձի 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, մոսախլեոբձի գանաწիլեցա რეგიონების, მშობლიური ენისა და ქართული ენის თავისუფლად ფლობის მიხედვით (https://smr.gov.ge/uploads/prev/_20_1___a40096f8.xls).

[21] *Ավելի մանրամասն քննության հարց համարելով Ջավախքից դուրս ապրող Վրաստանի հայության դինամիկայի խորհրդային ժամանակափուլը՝ նշենք, որ, տիրող համընդհանուր մթնոլորտին համահունչ, Խորհրդային Վրաստանի հայության մի ստվար հատված իր միջնակարգ կրթությունը ստացավ ռուսական դպրոցներում, իսկ ահա հետխորհրդային շրջանում հակառուսական տրամադրությունների պայմաններում իրար հետևից փակվող ռուսական դպրոցները հայության՝ դեռևս գոյատևող հատվածներին ևս վերջնականորեն ուղղորդեցին վրացական դպրոցներ: Ռուսական դպրոցներ հաճախող հայության վերջին բեկորները ևս հայտնվեցին մշտապես առկա ուծացման գործընթացի վերջնահանգրվանին: Դժվար է միանշանակորեն ռուսական դպրոցները համարել վրացականացման հորձանքի պատնեշ. այնուամենայնիվ, այն մի միջոց էր, որով սեփական լեզվին չտիրապետող հայության այդ հատվածը տարբերվում էր վրացիներից, որով էլ, ինչ-որ տեղ, զերծ էր մնում վերջնական տարրալուծումից: Հետխորհրդային շրջանում փակվող ռուսական դպրոցների հետ մեծ թափով վերանում է նաև հայության նշյալ հատվածի այս «տարբերակիչ» գործոնը:*

Վրաստանի հայ ազգաբնակչության ազգաբաշխական պատկերը՝ 2014 թ. վիճակագրական տվյալների համաձայն[22]

Մայրաքաղաք / նահանգ	Բնակչության ընդհանուր թիվ	Հայ բնակչության թիվ (արտահայտված %-ով)	Հայ բնակչության բացարձակ թիվ
Թբիլիսի (մայրաքաղաք)	1.108.717	4,82	53.440
1. Ռաճա-Լեչխումի և Քվեմո Սվանեթի	32.089	0,03	10
2. Քվեմո Քարթլի	423.986	5,07	21.496
3. Սամեգրելո-Զեմո Սվանեթ	330.761	0,04	132
4. Գուրիա	113.350	1,08	1224
5. Իմերեթ	533.906	0,13	694
6. Աջարիայի ԻՀ	333.953	1,64	5.477
7. Շիդա Քարթլի	263.382	0,79	2.081
8. Կախեթ	318.583	0,69	2.198
9. Սամցխե-Ջավախք	160.504	50,52	81.087
10. Մցխեթա-Մթիանեթ	94.573	0,31	293

Վրաստանի հայ բնակչության ձուլման մասին որոշ վիճակագրական դիտարկումներ

Վրաստանի հայության շրջանում XX դարում տեղի ունեցած էթնոձուլման (փոխակերպման) ահեղ գործընթացը ցույց տանք Գորիի գավառի օրինակով: Այսպես՝ 2002 թ. Վրաստանում տեղի ունեցած մարդահամարի արդյունքնե-

[22] Սաքարթվելոս տատիստիկոսի ազգային ծառայության, Սաքարթվելոս տատիստիկոսի ազգային ծառայության 2014 թվականի բնակչության մարդահամարի հիմնական արդյունքներ, Թբիլիսի, 2018, էջ. 11–12. *Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի սույն՝ «2014 թվականի Վրաստանի բնակչության մարդահամարի հիմնական արդյունքները» խորագրով ծավալուն ժողովածուում ևս բացակայում են Վրաստանում ապրող ազգությունների վերաբերյալ բացարձակ թվերը. այդ ցուցանիշները տրված են միմիայն տոկոսների տեսքով: Ավելին՝ նշված ժողովածուում առանձին ազգությունների տոկոսային հարաբերակցությունը ներկայացնող տասնորդական կոտորակները տրված են տասնորդական ճշտությամբ: Հաշվի առնելով դա՝ հիմք ենք ընդունել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացրած վիճակագրական փաստաթուղթը («Վրաստանում 2014 թվականի ընդհանուր մարդահամար»,* UNFPA / Forset, 2019. – https://georgia.unfpa.org /sites/default /files/pub-pdf/full% 20calendar_geo_0.pdf), *որտեղ նույն տասնորդական կոտորակները ներկայացված են հարյուրերորդական ճշգրտությամբ: Քանի որ Վրաստանի հայ բնակչության ինչպես ընդհանուր, այնպես էլ այս կամ այն մարզի բացարձակ թիվը հաշվարկել ենք՝ հիմնվելով տոկոսային հարաբերակցության վրա, ապա հարյուրերորդական ճշտությամբ տասնորդական կոտորակների վրա կատարված հաշվարկներով հայ բնակչության թիվը և՛ առավել մոտ է իրական թվին, և՛ ավելի մեծ է, քան առաջին դեպքում:*

րով՝ Ստորին (Շիդա) Քարթլի նահանգի 4՝ Գորիի, Կասպի, Քառելի և Խաշուրի շրջանների[23] հայության թիվը կազմում էր ընդամենը 3.521[24]: Սա այն պայմաններում, երբ 1886–1914 թթ. Գորիի գավառի հայությունն աճել է 38,14 %-ով, իսկ տարեկան աճը կազմել՝ 1,36 %[25]: Աճի առավել մեծ տեմպեր է գրանցել հատկապես Գորի քաղաքի հայությունը՝ նշված թվականների համար գրանցելով 140,0 %. այստեղ տարեկան աճը կազմում է 5 %: Գորիի գավառի՝ Հարավօսական ԻՄ-ի կազմում ներառված տարածքներում հայության թիվը մեծ տոկոս չէր կազմում (1886 թ.՝ 750 կամ գավառի հայ ազգաբնակչության 4,1 %-ը): Հետևաբար՝ ԻՄ-ի հայության թիվը 2002 թ. հաշվարկների մեջ չներառելն[26] այնքան էլ չի խանգարում պատկերացում կազմելու ժողովրդագրական այն տեղաշարժերի մասին, որոնք տեղի են ունեցել Գորիի գավառում:

Հետաքրքրական մի փաստ ևս. 2002 թ. մարդահամարի արդյունքում Շիդա Քարթլիի հայ-լուսավորչականների թիվը նշվում է 399[27]: Էական փոքր թիվ՝ համեմատած հայության պաշտոնական՝ 3.521 թվի հետ: Պատճառները պարզելու խնդիր այստեղ ևս կա: 2002 թ. մարդահամարի արդյունքում Վրաստանի պետական վիճակագրական դեպարտամենտի հրատարակած և Վրաստանի գյուղական ազգաբնակչությունը ներկայացնող ստվարածավալ հատորում[28] տեղ գտած՝ Գորիի, Կասպի, Քառելի և Խաշուրի շրջանների գյուղերի շարքում հիշատակություն չկա հայերի մասին. մեզ արդեն ծանոթ և մինչ XX դարա-

---

[23] *Այս 4 շրջանները ձևավորվել են նախկին Գորիի գավառի մեծագույն հատվածի վրա, գավառի հյուսիսային, փոքրագույն հատվածը մտել էր Հարավօսական ԻՄ-ի մեջ: Հետխորհրդային շրջանում՝ 1990-ական թվականների կեսերին, Վրաստանի մարզային բաժանման արդյունքում նշյալ 4 և Հարավօսական ԻՄ-ի տարածքի մեծ մասի հենքի վրա կազմավորվեց Շիդա Քարթլի նահանգը: Հավելենք նաև, որ Վրաստանի նշված վարչատարածքային բաժանմամբ՝ Հարավային Օսիայի նախկին ԻՄ-ի տարածքները ներառվեցին 4 նորաստեղծ նահանգների մեջ. արևելյան հատվածը ներառվեց Մցխեթա-Մթիանեթի, կենտրոնական հիմնական հատվածը՝ Շիդա Քարթլիի, արևմտյան մի փոքր հատված մտցվեց Իմերեթի և, վերջապես, հյուսիսարևելյան ևս մի փոքր հատված ներառվեց Ռաջա-Լեչխումի ու Քվեմո Սվանեթիի նահանգների մեջ: Հավելենք, որ մինչ օրս Վրաստանի փաստացի տիտղոսը տարածվում է միայն Գորիի, Կասպի, Քառելի և Խաշուրի շրջանների վրա:*

[24] Ծերոգցությունների և սամոքալաքո տանասկրորության հաշվառումների մասին տեղեկությունների՝ Վրաստանի տեղեկատվության ազգային գրասենյակ, դեմոգրաֆիկական վիճակագրություն, մոսանեցությունների 2002 թվի ամենամյա ամբողջական տվյալներ, ազգաբնակչության գրանցման և ազգաբնակչության գրանցման տվյալներ (https://smr.gov.ge/uploads/prev/d769d8f4.pdf).

[25] *Ի շ խ ա ն ե ա ն. 1919, 226:*

[26] *Նշենք, որ Հարավօսական ԻՄ-ում տարբեր պատճառներով հայերի աճ տեղի չի ունեցել, ընդհակառակը, այդ թիվը նվազել է՝ կազմելով՝ 1.374 (1926 թ.), 1.537 (1939 թ.), 1.555 (1959 թ.), 1.254 (1970 թ.), 953 (1979 թ.), 984 (1989 թ.):*

[27] Population by religious beliefs (By Major Adminstrative-Territorial Units) (http://upload.wikimedia.org/wikipedia/commons/5/5b/POPULATION_BY_RELIGIOUS_BELIEFS.pdf).

[28] Վրաստանի ազգաբնակչության գրանցման ազգային գրասենյակ, Վրաստանի ազգաբնակչության գրանցման ազգային գրասենյակ, Վրաստանի ազգաբնակչության գրանցման ազգային գրասենյակ (Վրաստանի գյուղական ազգաբնակչություն), Թբիլիսի, 2003 թվական.

սկիզբը երբեմնի հայաբնակ բոլոր գյուղերը ներկայացված են որպես մարդաշատ՝ 98, 99, 100 %-ով վրացաբնակ գյուղեր[29]*: Այդպիսիներից կուզենայինք առանձնացնել երբեմնի հայաբնակ* Կարպեթը *(Գորիի շրջ., 4501 շունչ, 98 % վրացաբնակ),* Տղվիավը *(Գորիի շրջ., 2845 շունչ, 99 % վրացաբնակ),* Քվախրեւը *(Գորիի շրջ., 2374 շունչ, 99 % վրացաբնակ),* Նաղարբազևը *(Գորիի շրջ., 269 շունչ, 91 % վրացաբնակ),* Ախալքալաքը *(Կասպի շրջ., 1233 շունչ, 94 % վրացաբնակ),* Դոեսը *(Կասպի շրջ., 2818 շունչ, 98 % վրացաբնակ),* Ատոցը *(Քարելի շրջ., 311 շունչ, 99 % վրացաբնակ),* Դիրբը *(Քարելի շրջ., 3028 շունչ, 99 % վրացաբնակ),* Ռուիսը *(Քարելի շրջ., 6032 շունչ, 99 % վրացաբնակ),* Ալը *(Խաշուրի շրջ., 1375 շունչ, 99 % վրացաբնակ),* Վաղա *(Խաշուրի շրջ., 1423 շունչ, 99 % վրացաբնակ) և մի շարք գյուղեր ու ավաններ*[30]*: Թվարկված և չթվարկված՝ երբեմնի վիրախոս հայաբնակ գյուղերը, ինչպես տեսնում ենք, ներկայումս բավականին խոշոր վրացական գյուղեր են, որից ենթադրելի է գորիահայության աճման բավականին մեծ տեմպերը. այն եղել է դարասկզբի աճման ընթացքին համահունչ:*

Զննելով 2002 թ. պաշտոնական վիճակագրությունը՝ պարզորոշ նկատվում է մուսուլման տարրի, հատկապես՝ ադրբեջանական զանգվածի առկայություն, սա՝ այն դեպքում, երբ, ինչպես վկայում են մեր կողմից վկայակոչված՝ XIX դարավերջի և XX դարասկզբի ժողովրդագրական պատկերը ներկայացնող աղբյուրները, այդ զանգվածն խապառ բացակայում էր Գորիի գավառից: Այսպես, 1886 թ. Անդրկովկասի բնակչության ընտանեկան ցուցակներից քաղված վիճակագրական տվյալների ժողովածուի՝ ազգությունների աղյուսակում թուրքերն ընդհանրապես բացակայում են, իսկ թաթարներ Գորի քաղաքում հիշատակվում է 2 անձ, գավառում՝ 3 ծուխ (17 անձ), նույն աղբյուրի՝ կրոնական հետևորդների բաժնում ևս Գորիի գավառում (քաղաքով հանդերձ) հիշատակվում են ընդամենը 10 մուսուլման սուններ և 17 մուսուլման շիաներ: Իսկ ահա Վրաստանի 2002 թ. մարդահամարի տվյալներով՝ Գորիի, Կասպի, Քառելի և Խաշուրի շրջաններում, միասին վերցրած, ադրբեջանցիների թիվը հասնում է 5768-ի կամ ամբողջ նահանգի բնակչության 1,84 %-ն է: Շրջանների մի շարք գյուղեր ամբողջովին կամ մասամբ բնակեցված են ադրբեջանցիներով՝ Լևիտանա *(Գորիի շրջ., 290 շունչ, ամբողջությամբ),* Թեղոծմինդա *(Գորիի շրջ., 541 շունչ, կիսով չափ),* Սաքադագիանո *(Կասպի շրջ., 1.095 շունչ, 62 %),* Խիդիսղուռի *(Կասպի շրջ., 899 շունչ, ամբողջությամբ),* Ախալսոփել *(Կասպի շրջ., 105 շունչ, 35 %),* Կալոուբանի *(Կասպի շրջ., 140 շունչ, 39 %),* Ֆերմա *(Կասպի շրջ., 1025 շունչ, 87 %),* Զանգիլարի *(Կասպի շրջ., 300 շունչ, ամբողջությամբ)*[31]*:*

---

[29] *Շուրջ 76 գյուղ ամբողջությամբ կամ մասամբ օսաբնակ են:*

[30] Սաքարթվելոս Տիտիստիկոյի Սահելմիֆիոյ Դեպարտամենտի, Սաքարթվելոս Մոսահլեոբիս 2002 ֆլիս Պիրվելի Երովնուլի Սայովելթաո Աղֆերիս Միրիտադի Շեդեգեբի (Սաքարթվելոս Սոֆլեբիս Մոսահլեոբա), Տոմի II, Թբիլիսի, 2003 ֆելի, գգ. 220–240.

[31] Սաքարթվելոս Տիտիստիկոյի Սահելմիֆիոյ Դեպարտամենտի, Սաքարթվելոս Մոսահլեոբիս 2002 ֆլիս Պիրվելի Երովնուլի Սայովելթաո Աղֆերիս Միրիտադի

Վրաստանի՝ Ջավախքի շրջաններից դուրս ապրող հայության պատմությունն իր պատմափուլերով օրինաչափորեն հար և նման է հայկական մի շարք գաղթօջախների անցած ուղուն՝ հիմնավորում, ազգային, մշակութային, կրոնական, հասարակական-քաղաքական կյանքի այս կամ այն կերպ կազմակերպում, պայքար օտարախոսության, օտարացման, ուծացման և սեփական տեսակի գոյության վերացման դեմ և, ի վերջո, պարտություն ու անհետացում պատմության ասպարեզից: Ինչո՞ւ օրինաչափորեն, քանի որ հիմնականում այդպիսին է իր Հայրենիքից դուրս դեգերող յուրաքանչյուր ազգի բնական ընթացքը, և գաղթօջախներում տարբեր ժամանակներում պայքարող հայ մտավորականությունն ինչքան էլ ջանք թափեր, կարող էր ընդամենն այս կամ այն չափով երկարացնել սեփական ազգի կյանքը, բայց փրկել այն մահվանից ի զորու է միայն Հայրենիքը:

Եզրակացություն

Երկրորդ աշխարհամարտից հետո ընկած ժամանակահատվածում Վրաստանի տարածքում ապրող հայության թիվն ունեցավ նվազման միտումներ՝ 1959–1989 թթ. ընթացքում 442,9 հազար մարդուց հասնելով 437,2 հազար մարդու (նվազել է 5,7 հազարով): Այս նույն տարիներին ադրբեջանցիների թիվը 153,6 հազարից հասել է 307,6 հազար մարդու՝ աճելով ավելի քան երկու անգամ:

Վրաստանի հայության թվաքանակն առավել կտրուկ անկում է ապրել հետխորհրդային շրջանում: 1989 և 2002 թթ. Վրաստանի պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ 13 տարվա ընթացքում Վրաստանի հայության թիվը նվազել է 188.282-ով: Եթե նույնիսկ հաշվի առնենք, որ ավելի քան 60–70 հազար հայեր 2002 թ. չեն հաշվառվել Վրաստանի վերահսկողության տակ չգտնվող Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի տարածքում, ապա հայության թվի՝ 120–130 հազարով նվազումը ևս խոսում է ժողովրդագրական լրջագույն փոփոխությունների, Վրաստանի հայության շրջանում առկա «ժողովրդագրական ճմռան» և դրանից բխող մարտահրավերների մասին:

2014 թ. պաշտոնական մարդահամարի արդյունքների համաձայն՝ հայ ազգաբնակչությունը կազմում է երկրի բնակչության 4,53 %-ը կամ 168.100 մարդ: 2002 թ. հետ համեմատած՝ 12 տարվա ընթացքում Վրաստանի հայության թիվը, համաձայն պաշտոնական տվյալների, կրճատվել է 80.829-ով՝ 248.929-ից դառնալով 168.100:

Եթե խորհրդային հետպատերազմյան ժամանակաշրջանում Վրաստանի հայությունն իր թվաքանակով գրավում էր երկրորդ տեղը՝ տիտղոսային ազգությունից՝ վրացիներից հետո, ապա ԽՍՀՄ փլուզումից հետո տեղի ունեցած որոշ «վերադասավորումների» արդյունքում, երբ հայության թիվը կտրուկ նվազեց (նվազման վրա ազդող նախորդ գործոններին գումարվեց նաև Աբխազիայի ու Հարավային Օսիայի հայության թվակազմերի՝ Վրաստանի պաշտոնական վիճակագրությունից դուրս մնալու իրողությունը), Վրաստանում ապրող հայությունն իր թվաքանակով զբաղեցրեց արդեն երրորդ տեղը՝ զիջելով ադրբեջանցիներին:

შედეგები (საქართველოს სოფლების მოსახლეობა), ტომი II, თბილისი, 2003 წელი, გვ. 220–240.

Վահե Սարգսյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայ գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Վրաստանի հայության, մասնավորապես՝ ջավախահայության հիմնախնդիրներ, Հայաստան–Վրաստան հարաբերություններում առկա բազմաբնույթ հիմնահարցեր, Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների խնդիրներ: Հեղինակ է 1 մենագրության և ավելի քան 20 հոդվածի: Vsargsyan83@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ազատամարտ» (Երևան), 1994, թիվ 47, 49, 50:

Ալեքսանյան Հ. 2013, Հայ ազգաբնակչությունը միութենական հանրապետություններում՝ ըստ 1959–1989 թթ. մարդահամարների տվյալների. – «Սփյուռքագիտություն», տարեգիրք, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 44–55:

Ավագյան Գ. 1994, Հայաստանը և հայերս աշխարհում, Երևան, «Օմեգա-Ն», 168 էջ:

Իշխանեան Բ. 1919, Վիճակագրական ուսումնասիրութիւն անդրկովկասեան ժողովուրդների: Մաս 1: Առաջին մաս. Ժողովուրդների տերրիտորիական բաժանումները եւ նրանց աճումը Անդրկովկասում, Բագու, տպարան «Ուրարդիա», 252 էջ:

Կարապետյան Ս. 2004, Հայերը Կախեթում, Երևան, «Գիտություն» հրատ., 224 էջ:

Սարգսյան Վ. 2013, Հայերը Գորիի գավառում և սահմանակից շրջաններում. – «Գլոբուս», հատուկ թողարկում, թիվ 10, Երևան, «Գասպրինտ», 70 էջ:

Джаошвили В. Ш. 1968, Население Грузии, экономико-географическое исследование. Тбилиси, «Мецниереба», 399 с.

Итоги Всесоюзной переписи населения 1970 года. 1973, т. IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов. М., «Статистика», 648 с.

Национальный состав населения РСФСР: по данным Всесоюзной переписи населения 1989 г. 1990. М., Республиканский информационно-издательский центр, 747 с.

Новикова Г. В., Дашко В. И. 2002, Самцхе-Джавахети: в эпицентре интересов, Российский институт стратегических исследований. – Грузия: проблемы и перспективы развития, т. 1. М., РИСИ, с. 229– 256.

Республика Южная Осетия, Управление государственной статистики, Итоги всеобщей переписи населения республики Южная Осетия 2015 года, официальное издание. 2016, Цхинвал, Управление государственной статистики, 456 с.

Скаков А. Ю. 2002, Абхазия: Социально-демографические проблемы, экономика, политика, Российский институт стратегических исследований. – Грузия: проблемы и перспективы развития, т. 1. М., РИСИ, с. 131– 166.

საქართველოს სტატისტიკის სახელმწიფო დეპარტამენტი, საქართველოს მოსახლეობის 2002 წლის პირველი ეროვნული საყოველთაო აღწერის შედეგები, ტომი I, თბილისი, 2003 წ., გვ. 222.

საქართველოს სტატისტიკის სახელმწიფო დეპარტამენტი, საქართველოს მოსახლეობის 2002 წლის პირველი ეროვნული საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები (საქართველოს სოფლების მოსახლეობა), ტომი II, თბილისი, 2003 წელი, გვ. 359.

საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, საქართველოს 2014 წლის მოსახლეობის საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, თბილისი, 2018, გვ. 380.

2014 წლის მოსახლეობის საყოველთაო აღწერა საქართველოში, გვ. 2 (https://georgia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/full%20calendar_geo_0.pdf).

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მოსახლეობის რაოდენობის განაწილება 10 ყველაზე მრავალრიცხოვანი ეროვნების მიხედვით (https://smr.gov.ge/uploads/prev/__72a21b22.pdf).

სტატისტიკის ეროვნული სამსახური (საქსტატი), მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის ძირითადი შედეგები, ზოგადი ინფორმაცია, საქართველოს მოსახლეობის რაოდენობის განაწილება 10 ყველაზე მრავალრიცხოვანი ეროვნების მიხედვით (http://census.ge/files/results/Census%20Release_GEO.pdf).

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მოსახლეობის რაოდენობის განაწილება აღმსარებლობის მიხედვით (https://smr. gov.ge/uploads/prev/__98482047.pdf).

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, მოსახლეობის განაწილება რეგიონებისა და აღმსარებლობის მიხედვით (დეტალური მონაცემები) (https://smr.gov.ge/uploads/prev/_22___9e6277bd.xls).

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2014 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, მოსახლეობის განაწილება რეგიონების, მშობლიური ენისა და ქართული ენის თავისუფლად ფლობის მიხედვით (https://smr.gov.ge/uploads/prev/_20_1___a40096f8.xls).

შერიგებისა და სამოქალაქო თანასწორობის საკითხებში საქართველოს სახელმწიფო მინისტრის აპარატი, დემოგრაფიული სტატისტიკა, მოსახლეობის 2002 წლის საყოველთაო აღწერის მონაცემები, საქართველოს მუდმივი მოსახლეობის განაწილება სქესისა და უპირატესი ეროვნებების მიხედვით (https://smr.gov.ge/uploads/prev/__d769d8f4.pdf).

Population by religious beliefs (By Major Adminstrative-Territorial Units) (http://upload.wikimedia.org/wikipedia/commons/5/5b/POPULATION_BY_RELIGIOUS_BELIEFS.pdf).

ДИНАМИКА АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ ГРУЗИИ ЗА 1959– 2014 ГГ. (По данным официальных переписей)

ВАЭ САРКИСЯН

Резюме

Ключевые слова: Грузия, Абхазия, Южная Осетия, армяне, перепись, официальная статистика, динамика, ассимиляция.

После Второй мировой войны количество армян, проживающих на территории Грузии, имело тенденцию к снижению: с 442,9 тыс. до 437,2 тыс. человек в 1959–1989 годах (уменьшение на 5,7 тыс.). За эти же годы численность азербайджанцев увеличилась более чем в два раза: с 153,6 тыс. до 307,6 тыс. человек.

Численность армян в Грузии резко сократилась в постсоветский период. Согласно официальной переписи населения Грузии 1989 и 2002 годов, количество армян в Грузии за 13 лет уменьшилось на 188.282 человека. Даже если учесть, что более 60–70 тыс. армян Абхазии и Южной Осетии в 2002 г. не учитывались, так как эти территории не подконтрольны Грузии, то уменьшение численности армян на 120–130 тысяч так-же говорит о серьезнейших демографических изменениях, о «демографической зиме» среди армян Грузии и вытекающих из этого вызовах.

По результатам официальной переписи 2014 г. армянское население составляет 4,53 % населения страны или 168.100 человек. По сравнению с 2002 годом, в течение 12 лет количество армян в Грузии, по официальным данным, уменьшилось на 80.829 человек: с 248.929 до 168.100 человек.

Если в советский послевоенный период армяне Грузии занимали второе место по численности после грузин – титульной нации, то в результате неких «перестановок», произошедших после распада СССР, когда численность армян резко уменьшилась (к прежним факторам, повлиявшим на снижение, добавилось и то, что из официальной статистики Грузии были исключены цифры армян Абхазии и Южной Осетии), армяне, проживающие в Грузии, заняли третье место по численности, уступая также и азербайджанцам.

Ваэ Саркисян – к. и. н., научный сотрудник отдела истории диаспоры и армянских колоний Института истории НАН РА. Научные интересы: проблемы армянства Грузии, в частности Джавахка, разные вопросы отношений Армения–Грузия, проблемы коренных народов и национальных меньшинств Грузии. Автор 1 монографии и более 20 статей.
Vsargsyan83@gmail.com

DYNAMICS OF THE ARMENIAN POPULATION OF GEORGIA IN 1959 – 2014
(According to the official census data)

VAHE SARGSYAN

S u m m a r y

Keywords: Georgia, Abkhazia, South Ossetia, Armenians, census, official statistics, dynamics, assimilation.

After the Second World War, from 1959 to1989, the number of Armenians living in the entire territory of Georgia decreased from 442.9 thousand to 437.2 thousand people (decrease by 5.7 thousand). During the same period, the number of Azerbaijanis increased more than twice: from 153.6 thousand to 307.6 thousand people.

The number of Armenians in Georgia sharply declined in the post-Soviet period. According to the official census of Georgia in 1989 and 2002, the number of Armenians in Georgia decreased by 188,282 people in 13 years. Even if we consider that more than 60-70 thousand Armenians of Abkhazia and South Ossetia were not taken into account in 2002, since these territories are not controlled by Georgia, the decrease in the number of Armenians by 120-130 thousand also speaks of the most serious demographic changes, of the "demographic winter" among Armenians of Georgia and of the consequent challenges.

According to the results of the official census of 2014, the Armenian population makes up 4.53% of the country's population or 168,100 people. In comparison with 2002, the number of Armenians in Georgia, according to the official data, decreased by 80,829 people within 12 years: from 248,929 to 168,100.

If in the Soviet post-war period, Armenians in Georgia occupied the second place in terms of their number after Georgians, the titular nation, then as a result of some "rearrangements" that took place after the collapse of the USSR, when the number of Armenians sharply decreased (in addition to the previous factors that influenced the decline, the figures of Armenians of Abkhazia and South Ossetia were excluded from the official statistics of Georgia) Armenians living in Georgia took the third place in terms of their number, giving way to Azerbaijanis as well.

Vahe Sargsyan – Candidate of Sciences in History, Researcher at the Department of the History of Diaspora and Armenian Colonies of the Institute of History of NAS RA. Scientific interests: the problems of Armenians of Georgia, particularly, Javakhk, various issues on relations between Armenia and Georgia, issues of indigenous peoples and national minorities of Georgia. Author of 1 monograph and over 20 articles. Vsargsyan83@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 2